Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

79

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Շարժում»-ի № 2

320
Ը-14

Վ. ԳԱՅՓԷՃԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

գնած է 10 դրամ

2

Ը-1

Ախալցխա
Եղբ. Մարտիրոսեանների
1917

ՀԱՅ ՑԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Շարժում»-ի № 2.

ԱԳՀ
17

Վ. Գայֆէճեան

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ



Ախալցխա
Տպարան Եղբ. Մարտիրոսեանների
1917

17-4492

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ.

—

Յեղափոխութիւնը քանդելով ինքնակալութեան երեք դարուայ փտած շինութիւնը և խափանելով նորա հիմնական օրէնքները մեր երկրի առաջ դրեց նոր իրաւակարգ սահմանելու խնդիրը։

Ներկայումս մենք ապրում ենք անցողական ժամանակում և հին պետական կազմի փոխարէն դեռ չունենք նորը։ Երկիրը չի կարող երկար ժամանակ ապրել այս անորոշ պայմանների մէջ, ուստի նա կարիք է զգում, որ շուտով հաստատուի նոր իրաւակարգ, այսինքն սահմանուեն պետական նոր կազմի և հասարակական կեանքի համար նոր հիմնական օրէնքներ։ Արդեօք ո՞վ պիտի

զբաղուի այս կարևոր ու բարդ գործով և ինչ է համարուելու այս բանի մէջ ամենալիազօրը։ Նոր իրաւակարգի մէջ շահագրգռուած է մեր երկրի համայն բնակչութիւնը, ուստի մի միայն ամբողջ ժողովրդի հաւաքական կամքը կարող է կառուցանել նոր պետական կազմի մեծ շինութիւնը։ Ճանաչելով ամբողջ ժողովրդի հաւաքական կամքը, իբրև իշխանութեան աղբիւր, մենք գործնականապէս ընդունում ենք առհասարակ միմիայն նորա մեծամասնութեան առաջնորդութիւնը։ Ֆիզիքապէս երկրի համայն բնակչութիւնը միաժամանակ և բոլորը ի միասին չեն կարող զբաղուել նորա վերաբերեալ քաղաքական և հասարակական բաղմակողմանի ու անյեսաձգելի գործերով, ուստի ամբողջ ժողովրդի փոխարէն, նորա կամքը կատարելու համար, ստեղծուած է ուրիշ միջոց—ժողովրդական ներկայացուցչութիւն։

Եթէ ամբողջ ժողովուրդը ֆիզիքապէս

հնարաւորութիւն չունի կառավարելու երկիրը և այդ բանի համար նորա փոխարէն սահմանուած է ժողովրդական-ներկայացուցչութեան սկզբունքը, ուրեմն երկրի համայն բնակչութեան կամքը իրագործելու համար պէտք է, որ ընտրել այնպիսի ներկայացուցիչներ, որոնք լինեն նորա կամքի իսկական արտայայտողները և նրանք ընտրուեն հնարաւորութեան չափով երկրի ամբողջ ժողովրդի կողմից, այսինքն ընտրութիւնը լինի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնաւորութեամբ։ Ընդհանուր ընտրութեան իրաւունքի էութիւնը նրա մէջն է կայանում, որ ներկայացուցիչներ ընտրելու գործի մէջ մասնակցութիւն ունենայ երկրի չափահաս ամբողջ բնակչութիւնը, 20 տարեկանից սկսած առանց դաւանանքի, ազգի և սեռի խտրութեան, և այն մտքով, որ ընտրութիւնը լինի հաւասար, այսինքն ամեն մի քաղաքացի ընտրութեան ժամանակ

ունենայ լոկ մի ձայն և ոչ աւելի։ Կան երկիրներ, որտեղ հաւասար ընտրողական իրաւունքի փոխարէն կայ ուրիշ, ներկայացուցիչներ ընտրելու միջոց, որը կախում է դրուած անշարժ կալուածք ունենալուց, ուստի քաղաքացին, իւր զանազան տեղերում ունեցած կալքերի քանակութեան համաձայն, նոյն քանակութեամբ ընտրողական ձայներ ունի։ Եթէ քաղաքացին ունի զանազան տեղերում հինգ անշարժ կալուածք, ուրեմն նա կարող է հինգ ներկայացուցիչներին ձայն տալ, իսկ անշարժ կալուածք չունեցողը իրաւունք ունի ընտրելու մի միայն մի մարդ։

Այս կերպով ընտրուած ներկայացուցիչները չեն կարող համարուել համայն ժողովրդի կամքի իսկական արտայայտիչները։ Արդարութիւնը պահանջում է, որ երկրի համայն բնակչութեան համար սահմանուեն միատեսակ օրէնքներ և նորանց առաջ բոլորը լինեն հաւասար։

Ընտրությունը պիտի լինի ուղղակի, այսինքն նա պիտի ունենայ այնպիսի ձև, որ ժողովուրդը հնարաւորություն ստանայ ուղղակի կերպով ձայն տալ իւր ճանաչած մարդուն, եթէ ոչ հակառակ դէպքում նա կարող է զրկուել իւր իսկական ներկայացուցիչից և այս բանը պատահում է այն դէպքում, երբ առաջ ընտրւում են ընտրողներ և այնուհետև վերջիններից իրենց միջից ընտրում ներկայացուցիչներ։

Ընտրությունը պիտի լինի գաղտնի կերպով։ Ընտրության գործը պիտի դրուի այնպիսի պայմանների մէջ, որ ընտրողի կամքի վերայ ոչ մի բռնություն դրսից գործ չդրուի։ Այս սկզբունքը իրագործւում է գաղտնի ձայնատուության համար. ամեն մարդ ձայն է տալիս իւր ընտրուածին փակած ծրարով, որի մէջ նա դնում է նորա անունը, գրուած մի թերթիկի վերայ։ Եթէ պատահի, որ ընտրող քաղաքացին ձայն պիտի տայ

միաժամանակ մի շարք մարդկանց, այս դէպքում ընտրողների անուններից կը կազմուի մի ցուցակ որոշ համարի տակ և ընտրողը ծրարի մէջ կդնէ մի միայն ցուցակի համարը և սորանով նա ձայն տուած կլինի բոլոր մարդկանց, որոնք նշանակուած են այդ ցուցակի մէջ։

Երկրի ամբողջ բնակչութեան կողմից ընտրուած ու լիազօրուած ներկայացուցիչները կհաւաքուեն մի տեղ սահմանելու Ռուսաստանի համար հիմնական օրէնքներ, ի միջի այլոց պետութեան կառավարութեան ձևը և լուծելու հասարակական բազմատեսակ հարցեր։ Այս տեսակ ժողովը անուանում է Սահմանադիր կամ Հիմնադիր ժողով։

Վերջինիս այս կամ այն կազմը մեծ նշանակութիւն կունենայ ամբողջ երկրի ապագայ կեանքի և յառաջադիմութեան համար, ուստի բոլոր քաղաքացիները սահմանադիր ժողովի համար անդամներ ընտրելու գործի մէջ ցոյց պիտի տան

լուրջ վերաբերմունք և աշխատեն, որ այդ ժողովի կազմը իսկապես ներկայացնէ համայն Թուրաստանի կամքը։ Հիմնադիր ժողովի գործունէութիւնը կը հաւաքի ժամանակաւորապէս և կատարելով իւր պարտականութիւնները, մըշտապէս կը ցրուի, իսկ ապագայ օրէնադիր պետական կազմակերպութիւնը — պառլամենտը կ'իրագործէ նորա կամքը, հիմնելով իւր գործունէութիւնը նոր իրաւակարգի վերայ, որը սահմանելու է սահմանադիր ժողովը։

Հին ռեժիմի ժամանակ բոլոր օրէնքները սերտ կերպով կապուած էին միապետական կարգի սկզբունքների հետ, որոնք խոր արմատներ էին թողել հասարակական կեանքի ամեն անկիւններում։

Այժմ երբ միապետի կամքի փոխարէն յաղթական կերպով հրապարակ եկաւ երկրի համայն ժողովրդի կամքը, ուստի հետևապէս ապագայում յայտարարուելիք օրէնքների վերայ պիտի լինի այդ

նոր կամքի կնիքը։ Այս կամքը, իբրև հասարակական ստեղծագործող նոր գործօն, ապագայում նշանաւոր դեր է խաղալու կենտրոնական և տեղական կեանքի ապարէզում։

Ինքնավարութեան գաղափարը ծագում է համայն ժողովրդի հաւաքական կամքով, որ բացել է համերաշխ աշխատակցութեան լայն ճանապարհը՝ հասարակական կեանքը ձուլելու նոր ձևերի մէջ։ Հին իրաւակարգը տապալուեց ամբողջ ժողովրդի հաւաքական կամքի ճնշման տակ և ամենքի համար, շնորհիւ յեղափոխութեան, ստեղծուեց կեանքի նոր ապարէզ, իսկ յեղափոխութիւնը, լինելով ժողովրդի հաւաքական կամքի անհրաժեշտ հետևանքը, իւր մէջ պարունակում է մի այնպիսի ստիպողական ոյժ, որին պիտի ենթարկուին երկրի մէջի եղած բոլոր բնակիչները։ «Ժողովրդի հաւաքական կամքը պատրաստում է և կատարում յեղափոխութիւնը և այդ կամքը օրէնք է

ամենքի համար» այսպէս է ասում ֆրանսիական նշանաւոր փիլիսոփայ Ժան-Ժակ-Ռուսսոն։

Ժողովրդապետութիւնը հիմնուած է երկրի համայն բնակչութեան կամքի վրայ։ Նա այն ժամանակ կունենայ իւր արժանի ու արդարացի գնահատութիւնը, եթէ մարդկանց մէջ ներկայ լինի ներքին ամբողջութեան գիտակցութիւնը և այս դէպքում մի միայն կարելի կ՚լինի համարել ժողովրդի կամքը իբրև բարձրագոյն իշխանութեան և ամբողջ երկրի համար պարտադիր հիմնական օրէնքների աղբիւր։

Յայտարարելով միապետական կարգի փոխարէն պետութեան նոր կազմի ձև— դեմոկրատական հասարակապետութիւնն անհրաժեշտ է, որ այդ կարգը դրուի համապատասխան նորա էութեան զարգացման առողջ հիմքերի վրայ։ Զարգացման էական հիմքերից մէկը ինքնավարութեան սկզբունքն է։ Բայց բաւական

չէ յայտարարել միապետութեան փոխարէն հասարակապետութիւն, եթէ ժողովուրդը հնարաւորութիւն չ՚պիտի ունենայ նորածիլ հասարակական հիմնարկութիւնների միջոցաւ արտայայտել իր կամքը և հոգալ իւր անձնական պահանջները սեփական ոյժերով։

Գնայելով, որ Ֆրանսիայում գոյութիւն ունի հասարակապետութիւն, բայց ինքնավարութեան սկզբունքը անց չէ կացրած հասարակական կեանքի և ընակչութիւնը իր կենսական պահանջները հոգալու գործի մէջ չունի ազատութիւն. նա անկախ չէ, այլ պետական հիմնարկութիւնների մէջ նախագահում է կենտրոնական իշխանութեան կողմից նշանակուած մի պաշտօնեայ անձ, որը տեղական բազմատեսակ խնդիրների լուծման մէջ վճռողական դեր է խաղում, իսկ ընակչութիւնը օգտուում է միմիայն խորհրդակցական ձայնով։

Այդ պաշտօնեայ մարդը գործնակա-

նապէս իրադործում է այն օրէնքները, որոնք յայտարարուած են պետական իշխանութեան կողմից տեղական կեանքի համար։ Այս բանից հետևում է, որ ժողովրդի կեանքը կառավարելու գործի մէջ այնտեղ իրադործւում է ոչ թէ ժողովրդի կամքը, այլ կենտրոնական իշխանութեան կամքը։

Եթէ սահմանադիր ժողովը ստեղծելով հասարակապետութիւն կ'գանի, որ տեղական կեանքը կառավարելու համար պիտի տրուի ժողովրդին ազատ իրաւունք, այն ժամանակ պէտք է սահմանուի ապակենտրոնացում լայն ինքնավարական հիմունքների վրայ։ Սորա հակառակը կենտրոնացումն է, ինչպէս ասացինք վերը, այսինքն տեղական կեանքը կառավարելու համար կարգադրութիւններ են անւում կենդրոնից։

Քաղաքական դրականութեան մէջ ինքնավարութիւն բառը փոխարինում են ,,աւտոնոմիա'' բառով, բայց այս բառը

ուղիղ գործածելու համար պէտք է գիտնել նորա միտքը։ Աւտոնոմիան այնպիսի իրաւակարգ է, որի հիման վրայ մարդիկ իրանց կեանքը կառավարում են սեփական միջոցներով։ Աւտոնոմիա բառը բաղկացած է յունական երկու բառերից ,,ա ւ տ ո ս'' բառից, որը կ'նշանակէ ինքը և ,,ն ո ւ մ ո ս'', որը կ'նշանանակէ օրէնք։ Եթէ մենք միացնենք այս երկու բառերը և մենք կ'հասկանանք աւտոնոմիա բառի նշանակութիւնը հարևանցի կերպով և ոչ թէ նորա բուն միտքը։ Աւտոնոմիան գործածւում է երկու կերպ. վարչական և քաղաքական մտքով։

Վարչական աւտոնոմիա, կամ ինքնավարութիւն լինում է այն դէպքում, երբ մարդիկ իրանց կեանքը կառավարում են առանձնապէս սահմանուած պետական իշխանութեան կողմից օրէնքներով, որի ներկայացուցիչը միմիայն հսկում է ասանց մի որևէ միջամտութեան աւտոնոմ մարմնի գործունէութեան մէջ։ Կե-

տական իշխանութեան կողմից պաշտօնեան հսկում է, որպէսզի այս աւտոնոմ մարմնի մէջ որքան ճիշտ են կատարուում օրէնքները։

Աւտոնոմիա բառը գործածւում է նոյնպէս քաղաքական մտքով, որի հիման վերայ մի սրեւէ երկիր կամ համայնք, առանց պետական իշխանութեան իրաւամակալութեան կառավարում է իր տեղական գործերը սեփական վարչական ու օրէնսդրական կազմակերպութիւնների միջոցաւ, կապուած լինելով համայն պետութեան կազմի հետ ընդհանուր շահերով։ Աւտոնոմ համայնքների քանակութիւնը մի պետութեան մէջ կարող է լինել շատ և այդ համայնքները իրարուց կարող են զանազանուել ծագումով, լեզուով և սովորութիւններով, բայց միասին կազմել մի ամբողջութիւն։

Կարող է պատահել և հակառակը, այսինքն աւտոնոմ համայնքները միատեսակ լինեն ծագումով, լեզուով և աւանդու-

թիւններով։ Այս դէպքում նպատակայարմար է համարւում բոլորի համար ստեղծել վարչական ատենատիպ, իսկ առաջի դէպքում սահմանել քաղաքական ատենատիպ։ Երբ ռուսաստանի յեղափոխութիւնը առաջ բերեց ազգութիւնների ինքնորոշման խնդիրը, պէտք եղաւ իրաքարշիւր քաղաքական ատենատիպի սկզբունքները իրականացնել Ռուսաստանի մէջ գոյութիւն ունեն բազմաթիւ ազգութիւններ, որոնք թէպէտ բոլորը միասին կազմում են մի ամբողջութիւն բարձրագոյն իշխանութեան հովանաւորութեան տակ, բայց իրարուց զանազանւում են ծագումով, տարբեր կուլտուրական պատմութիւնով, սովորութիւններով, ուստի բոլորի կեանքը կատարելու համար միատեսակ օրէնքներ ստեղծելը աննպատակայարմար է։ Մինչև հիմա Ռուսաստանի մէջ ապրող ազգութիւնների կեանքը դրուած էր բնական կալի կամայականութեան կնիքով և ոչ

մի ազգ հին ռեժիմի ժամանակ չէր կարող երաղել քաղաքական ազատ կեանքի լայն ասպարէզի մասին իսկ այժմս յեղափոխութիւնը բացեց մեզ համար նոր կեանք և անձնաւորութեան ազատութեան հետ միասին համայնքների և ազգութիւնների համար քաղաքական աւտոնոմիա սահմանելու հնարաւորութիւն։

Հասարակական կեանքի զարգացման էական հիմքերից մէկը անձնաւորութեան ազատութիւնն է առանց որի քաղաքական աւտոնոմիան չի կարող գոյութիւն ունենալ։ Անձաւորութեան ազատութիւնը մտքի ազատութեան հետ ի միասին մարդկանց մէջ կ՚զարթնեցնէ ինքնագործունէութեան եռանդ և հանրային կեանքի մէջ առաջ կ՚բերէ համերաշխ աշխատակցութիւն։ Նոր իրաւակարգը ճանաչելով անձնաւորութեան ազատութիւնը հիմնական օրէնքներից մէկը, այդ զկըզբունքը նա պիտի ապահով է վստահելի երաշխիքներով դատաստանական և վար-

չական հաստատութիւնների միջոցով, որոնք պիտի դրուին իրական հիմունքների վերայ։

Սահմանադիր ժողովը չի կարող համարուել կատարած իւր բոլոր պարտականութիւնները, եթէ նա չվերացնէ այն տնտեսական անհաւասարութիւնը, որը գոյութիւն ունի երկրի բնակչութեան մեծ մասի մէջ։ Առաջիկայ լուծելու անյետաձգելի հասարակական խնդիրների մէջ առաջնակարգ տեղը բռնում է հողային հարցը, որը ռուսական կեանքում պատմականօրէն առացել է շատ սուր ու անարդար բնոյթ։

Հողային հարցը բաւարար կերպով լուծելու համար հիմնադիր ժողովը նախ և առաջ պիտի բոլորովին ոչնչացնէ սեփականութեան իրաւունքի և սահմանէ հողի վերաբերեալ նոր սկզբունք, որի հիման վերայ հողը այլևս չպիտի իր մէջ պարունակէ ապրանքի յատկութիւնները. այսինքն պիտի վերացուեն ծախելու և

ընծայելու իրաւունքները հակառակ դէպքում աջողակ լուծուած հողային հարցը կ'առանայ առաջուայ հին ընոյթը եթէ կեանքի մէջ մնան սեփականութեան ընծայելու և ծախելու իրաւունքները որովհետև սատիճանաբար կրկին հողի մեծ մասը կ'կենտրոնանայ որոշ քանակութեամբ հարուստ կալուածատէրերի ձեռքերում։

Սահմանադիր ժողովը, վերացնելով վերոյիշեալ իրաւունքները, պիտի վճռի շատ բարդ խնդիր, արդեօք ո՞ւմ պիտի պատկանի Ռուսաստանի ամբողջ հողը։ Գոյութիւն ունի երեք կարծիք, որոնցից այստեղ կբերենք մի միայն ամենատարածուած երկու կարծիքները։ Մի կարծիքի համաձայն բարդ հողային հարցը կարելի է լուծել՝ մի միայն դնելով մշակման ենթակայ հողը պետութեան իշխանութեան տակ, լիազօրելով բարձրագոյն հաստատութիւններին բաժանել հողը ցանկացող հողագործների մէջ։ Հողային

հարցի այս կերպ լուծումը անուանում են Հողի Նացոնալիզացիա։ Հակառակ վերոյիշեալ կարծիքի քաղաքաան. գրականութեան մէջ գոյութիւն ունի մի այլ կարծիք, որի համաձայն հողային հարց լուծումը պէտք է վերապահել համայնքների ձեռնահասութեանը, այսուհետև այդ հարցի լուծումը սատանում է հ. ղի համայնացում դարձուածքը.—Հողի Սոցիալիզացիա։ Համաձայն սորա հողի սեփականութիւնը վերացւում է և նա յայտարարւում է բոլորովին ազատ, այսինքն հողը ոչ մէկին չի պատկանում, բացի ամեն մարդ հողը մշակել ցանկացողը համայնքների միջոցով կստանայ այն քան հող, որքան մարդս իւր փիզիքական ոյժերների համաձայն կարող կլինի արդիւնաւոր կերպով մշակել իւր բաժինը առանց աշխատաւոր վարձելու։ Ամեն դիւղական համայնքում հողային սեփականութիւնը իրագործւում է ընդհանուր ոյժերով, ինչպէս աշխատաւոր մեծ մեծ

ընտանիքի մէջ, որտեղ ամեն մի անդամ իւր ոյժերի և ընդունակութիւնների համաձայն որոշ գործեր է կատարում։ Ռուսաստանի բնակչութեան մեծ տոկոսը հիմնադիր ժողովից կապասէ այս կարևոր հարցի լուծմանը և նա չի կարող երևակայել անձնաւորութեան ազատութիւնը առանց հողային հարցի աջողակ լուծման։ Սահմանադիր ժողովի գործունէութիւնը չի կարող լինել լիակատար, եթէ նա չբարվոքէ աշխատաւոր դասակարգի կեանքը, ստեղծելով աշխատանքի նոր բարեյաջող պայմաններ և դրական օրէնքներ։ Հիմնադիր ժողովը նոր դեմոկրատիկ իրաւակարգի միջոցաւ պիտի կազմակերպէ ժողովրդի բոլոր ոյժերը, որ ամբողջ երկիրը ընթանայ կուլտուրական կեանքի զարգացման ուղիղ ճանապարհով և իրագործուեն հաւասարութեան ու եղբայրութեան վեհ սկզբունքները։

-400-

ՀՀ Ազգային գրադարան
NL0836106

2

U 92
17